Արձանագրություն N 2
ՀՀ առողջապահության նախարարության կարիքների համար շրջանակային համաձայնագրով դեղորայքի «ՀՀ ԱՆ ՇՀԱՊՁԲ-15/4-2017/7-ԳՀ» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան «03» «մայիսի» 2017թ.
ժամը 11:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ Հ. Հարությունյան
Հանձնաժողովի անդամներ Մ. Մխիթարյան, Վ. Գրիգորյան
Հանձնաժողովի քարտուղար Լ. Սարգսյան

1. Ընթացակարգի հայտերի բացման մասին

(Հ. Հարությունյան)

Ընդունել ի գիտություն, որ.

20.04.17թ. armeps համակարգով ծանուցվել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/4» ծածկագրով շրջանակային համաձայնագրեր կնքած կազմակերպություններին, որոնցից հայտ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունը.

Հ/Հ	Մասնակցի անվանում	Էլ. հասցե
1	«Արֆարմացիա» ՓԲԸ	arpharm.erevan@yandex.ru

Ընդունվել է որոշում՝ կողմ՝3, դեմ՝ 0:

2. Տվյալներ՝ ծրարների կազմման և ներկայացման հրավերի պահանջներին համապատասխանության մասին

(Հ. Հարությունյան)

Մասնակիցների կողմից ներկայացված ծրարները կազմված են հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

(Հ. Հարությունյան)

Մասնակցի կողմից ներկայացված ծրարում առկա չի եղել սույն գնման ընթացակարգի հրավերի Հավելված 3.4-ը՝ ֆինանսական միջոցների մասին հայտարարությունը, ուստի հաշվի առնելով, 2011թ. փետրվարի 10-ի Գնումների գործընթացի կազմակերպման մասին ՀՀ կառավարության որոշման 45-րդ կետը, որոշվեց մասնակցին առաջարկել մեկ աշխատանքային օրվա ընթացքում սույն գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ներկայացնել Հավելված N 3.4-ը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

4. Հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

(Հ. Հարությունյան)

Հարցումներ չեն եղել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

5. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Հ. Հարությունյան)

Հիմք ընդունելով 2011թ. փետրվարի 10-ի Գնումների գործընթացի կազմակերպման մասին ՀՀ կառավարության որոշման 45-րդ կետը ՀՀ ԱՆ ՇՀԱՊՁԲ-15/4-2017/7-ԳՀ ծածկագրով գնման ընթացակարգի հաջորդ նիստը տեղի կունենա 2017 թվականի մայիսի 04-ին ժամը 11:00-ին, ՀՀ առողջապահության նախարարություն, հասցեն՝ ք.Երևան, Կառավարական տուն 3, 2-րդ հարկ, նիստերի դահլիճ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Հ. Հարությունյան

Անդամներ՝ ---------- Մ. Մխիթարյան

---------- Վ. Գրիգորյան

Քարտուղար՝ ---------- Լ. Սարգսյան

Արձանագրություն N 3
ՀՀ առողջապահության նախարարության կարիքների համար շրջանակային համաձայնագրով դեղորայքի «ՀՀ ԱՆ ՇՀԱՊՁԲ-15/4-2017/7-ԳՀ» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան «04» «մայիսի» 2017թ.
ժամը 11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ	Հ. Հարությունյան
Հանձնաժողովի անդամներ	Մ. Մխիթարյան, Վ. Գրիգորյան
Հանձնաժողովի քարտուղար	Լ. Սարգսյան

1. Բացված ծրարում պակաս փաստաթղթերի ներկայացման մասին

(Հ. Հարությունյան)

«Արֆարմացիա» ՓԲԸ-ի կողմից ներակայացվել է սույն գնման ընթացակարգի հրավերի պահանջներին բավարարող Հավելված 3.4-ը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Մասնակցի ներկայացված հայտի գնահատման և ամփոփման մասին

(Հ. Հարությունյան)

«Արֆարմացիա» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատվում է բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. Մասնակցի առաջարկած գների մասին

(Հ. Հարությունյան)

Ընդունել ի գիտություն, որ.

Կազմակերպության կողմից ներկայացված գնային առաջարկը ներկայացվում է ստորև.

Հ/Հ	Անվանում	Չափման միավոր	Քանակ	Մեկ միավորի գին՝ առանց ԱԱՀ	Գումար՝ առանց ԱԱՀ
1	Մեթադոնի հիդրոքլորիդ 10 մգ	դեղահատ	832.800	128	106.598.400
2	Մեթադոնի հիդրոքլորիդ 40մգ	դեղահատ	102.000	268	27.336.000

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

4. Մասնակցի հետ գների նվազեցման շուրջ բանակցությունների մասին

(Հ. Հարությունյան)

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը և այն հանգամանք, որ «Արֆարմացիա» ՓԲԸ-ի ներկայացուցիչը մասնակցում էր սույն նիստին՝ որոշվեց «Արֆարմացիա» ՓԲԸ-ի հետ իրականացնել գների նվազեցման շուրջ բանակցություններ, որի արդյունքում վերանայված գները ներկայացվում է ստորև.

Հ/Հ	Անվանում	Չափման միավոր	Քանակ	Մեկ միավորի գին՝ առանց ԱԱՀ	Գումար՝ առանց ԱԱՀ
1	Մեթադոնի հիդրոքլորիդ 10 մգ	դեղահատ	832.800	124	103.267.200
2	Մեթադոնի հիդրոքլորիդ 40մգ	դեղահատ	102.000	260	26.520.000

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

5. Առաջին և հաջորդաբար տեղերն զբաղեցրած մասնակիցներին որոշելու մասին

(Հ. Հարությունյան)

Որոշվեց «ՀՀ ԱՆ ՇՀԱՊՁԲ-15/4-2017/7-ԳՀ» ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Արֆարմացիա» ՓԲԸ-ին

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

6.Առաջին տեղը զբաղեցրած մասնակցին որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթերի ներկայացման մասին

(Հ. Հարությունյան)

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետը՝ որոշվեց առաջարկել «Արֆարմացիա» ՓԲԸ-ին 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով ծանուցման պահից 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

7. ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված հարցման ներկայացման մասին

(Հ. Հարությունյան)

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետը՝ որոշվեց ՀՀ ԿԱ ՊԵԿ հարցում ներկայացնել «ՀՀ ԱՆ ՇՀԱՊՁԲ-15/4-2017/7-ԳՀ» ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև հայտը ներկայացվելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը ներկայացված գնային առաջարկից պակաս չլինելու և հայտը ներկայացվելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը ակտիվների հաշվեկշռային արժեքին չգերազանցելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

8. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը,

Ժամը և վայրը հաստատելու մասին

(Հ. Հարությունյան)

«ՀՀ ԱՆ ՇՀԱՊՁԲ-15/4-2017/7-ԳՀ» ծածկագրով գնման ընթացակարգի հաջորդ նիստը տեղի կունենա Կառավարական թիվ 3 շենքում, փոքր դահլիճում համաձայն ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 49-րդ կետի, առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից պահանջվող փաստաթղթերը ներկայացնելուց հետո:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Հ. Հարությունյան

Անդամներ՝ ---------- Մ. Մխիթարյան

---------- Վ. Գրիգորյան

Քարտուղար՝ ---------- Լ. Սարգսյան